

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Այվազյանի և Միքայել Մելքումյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-411-03.12.2013-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված՝ մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված (կառուցված, մշակված) ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետները 2014 թվականի հունվարի 1-ից սահմանել՝

ա. շենքերի, շինությունների և փոխանցող հարմարանքների համար՝ ներկայումս գործող 20 տարվա փոխարեն 15 տարի,

բ. հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքերի և շինությունների համար՝ ներկայումս գործող 10 տարվա փոխարեն 8 տարի,

գ. չնշված հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի համար՝ ներկայումս գործող 3 տարվա փոխարեն սահմանել 2 տարի:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ՝

1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքով ոչ ընթացիկ ակտիվների համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետներն արդեն իսկ ենթադրում են արագացված ամորտիզացիայի համակարգի կիրառություն, քանի որ այդ ժամկետները նկատելիորեն ավելի կարճ են, քան համապատասխան ոչ ընթացիկ ակտիվների օգտակար ծառայության ժամկետներն են: Այսինքն, նախագծի ընդունման հիմնավորմամբ ներկայացված՝ ոչ ընթացիկ ակտիվներն առավել կարճ ժամկետում արդիականացնելու ու վերարտադրելու նպատակադրումը, հնարավոր է հաջողությամբ իրականացնել նաև գործող օրենքի շրջանակներում:

2. Ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիոն համակարգի կատարելագործման, դրա գծով հարկային հաշվառման կանոնների պարզեցման, ինչպես նաև ամորտիզացիոն նվազագույն ժամկետների առավել կրճատման խնդիրը լուծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ 2012 թվականի դեկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-238-Ն օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի 7-րդ հոդվածով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը լրացվել է նոր՝ 12.1-ին հոդվածով, որի համաձայն, 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերվող (կառուցվող, մշակվող) ոչ ընթացիկ ակտիվների մասով ներդրվել է միջազգային

պրակտիկայում լայնորեն կիրառվող՝ ամորտիզացիոն մասհանումների հաշվարկման փուլինգային համակարգ: Վերջինս ենթադրում է, որ նշյալ ոչ ընթացիկ ակտիվների մատով ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվելու են ելնելով ոչ ընթացիկ ակտիվների տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն տարեկան առավելագույն տոկոսադրույքներից: Ընդ որում, նոր համակարգը մշակված է այնպիսի տրամաբանությամբ, որպեսզի հարկ վճարողներն ոչ ընթացիկ ակտիվի շահագործման առաջին տարիներին ավելի մեծ չափով ամորտիզացիոն մասհանումներ կատարելու հնարավորություն ունենան: Նոր համակարգի շրջանակներում կիրառվելիք ամորտիզացիոն տարեկան առավելագույն տոկոսադրույքները սահմանվել են ոչ թե ներկայումս կիրառվող մեկ տարվան բաժին ընկնող ամորտիզացիոն տոկոսադրույքների չափով, այլ շուրջ 1.5 անգամ ավելի մեծ չափով: Օրինակ, մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված շենքերի և շինությունների համար ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է 20 տարի (ինչը նշանակում է, որ տարեկան կտրվածքով կարող է ամորտիզացվել շենքի արժեքի առավելագույնը 5 տոկոսը), մինչդեռ 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված (կառուցված) նույն շենքերի և շինությունների համար ամորտիզացիոն տարեկան առավելագույն տոկոսադրույքը սահմանված է 7.5 տոկոս:

Բացի դրանից, կարևորելով երկրի տնտեսության վրա գիտության զարգացման ազդեցությունը և հաշվի առնելով ներկայիս գիտատեխնիկական զարգացման աճի արագ տեմպերը՝ վերոնշյալ օրենսդրական փոփոխությամբ խրախուսվել է նաև գիտական առաջընթացի ներդրումը «բիզնեսի» մեջ: Այսպես, եթե մինչև 2013 թվականի հունվարի 1-ը նվազեցման ենթակա էին բացառապես գործունեության մեջ շահագործվող հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները (այսինքն՝ հաշվի էր առնվում միայն «ֆիզիկական» մաշվածքը), ապա 2013 թվականի հունվարի 1-ից հետո նշված սահմանափակումը հանվեց և այժմ, ֆիզիկական մաշվածքի հետ զուգահեռ, նվազեցման

ենթակա է նաև հիմնական միջոցների «բարոյական» մաշվածքը: Դա նշանակում է, որ հարկ վճարողին հնարավորություն է ընձեռված՝ արդիականացնել իր հիմնական միջոցները՝ կիրառելով գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան հիմնական միջոցներ՝ միաժամանակ հնարավորություն ունենալով նվազեցնել գործունեության մեջ այլևս չօգտագործվող հիմնական միջոցների ամորտիզացիան:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի հեղինակներին առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ օրենքի նախագծի քննարկումից և դրան, ըստ անհրաժեշտության, անդրադառնալ որոշակի ժամանակահատված անց, օրենքի 12.1-ին հոդվածի գործնական կիրառման արդյունքների վերլուծությունից հետո:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը:

Օրենքի նախագծի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող ձեռնարկությունների հիմնական միջոցների, այդ թվում շենքերի և շինությունների ամորտիզացիայի ժամկետների կրճատումը կհանգեցնի բժշկական կազմակերպությունների կողմից կատարվող տարեկան ամորտիզացիոն մասհանումների գումարի ավելացմանը: Վերջինս էլ, որպես հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից կատարվող նվազեցում, կպակասեցնի կազմակերպության հարկվող շահույթը, և որպես հետևանք՝ շահութահարկի գումարը:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն**:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) փոփոխվում են ամորտիզացիոն մասհանումների գումարի հաշվարկման հիմք հանդիսացող հիմնական միջոցների որոշ խմբերի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **դրական ազդեցություն**:

Նախագծով նախատեսվում է կրճատել կազմակերպությունների հիմնական միջոցների ամորտիզացիայի ժամկետները՝ սահմանելով առավել արագ ամորտիզացիոն ժամկետներ, ինչը հնարավորություն կտա կրճատել ֆինանսական ծախսերի մեծությունը, ինչպես նաև խթանել հիմնական միջոցների արդիականացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Ժողովի պատգամավորներ Վարդան Այվազյանի և Միքայել Մելքումյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված՝ մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված (կառուցված, մշակված) ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետները 2014 թվականի հունվարի 1-ից սահմանել՝

ա) շենքերի, շինությունների և փոխանցող հարմարանքների համար՝ ներկայումս գործող 20 տարվա փոխարեն 15 տարի,

բ) հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքերի և շինությունների համար՝ ներկայումս գործող 10 տարվա փոխարեն 8 տարի,

գ) չնշված հոսքային գծերի, ոռոտատեխնիկայի համար՝ ներկայումս գործող 3 տարվա փոխարեն սահմանել 2 տարի:

Մեր կողմից կատարված նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամորտիզացիոն նվազագույն ժամկետների կրճատումը կհանգեցնի տարեկան ամորտիզացիոն մասհանումների գումարի ավելացմանը, ինչի արդյունքում կնվազի տնտեսավարող սուբյեկտների տարեկան հարկվող շահույթը, հետևաբար նաև բյուջե վճարվելիք շահութահարկի գումարը:

Հաշվի առնելով վերոնշյալը, գտնում ենք, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի եկամուտների վրա կունենա բացասական ազդեցություն, որը սակայն հնարավոր է կոնկրետ գնահատել՝ հաշվի առնելով շահութահարկ վճարող իրավաբանական անձանց պատկանող ոչ ընթացիկ ակտիվների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը:

Միաժամանակ, նախագծի ընդունումը պետական բյուջեի ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-411-03.12.2013-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասում՝

- 1) «ա» ենթակետում «20 տարի» բառերը փոխարինել «15 տարի» բառերով.
- 2) «բ» ենթակետում «10 տարի» բառերը փոխարինել «8 տարի» բառերով.
- 3) «գ» ենթակետում «3 տարի» բառերը փոխարինել «2 տարի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ձեռքբերված (կառուցված, մշակված) ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիոն մասհանումները, իսկ նույն հոդվածի երկրորդ մասը, մասնավորապես, սահմանում է ամորտիզացիոն նվազագույն ժամկետներ հիմնական միջոցների տարբեր խմբերի համար, որոնցից ելնելով էլ հաշվարկվում է (նույն հոդվածով սահմանված կարգով) ամորտիզացիոն մասհանումների գումարը:

Այսպես՝ շենքերի, շինությունների եւ փոխանցող հարմարանքների համար (բացառությամբ հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական եւ ուսումնական հաստատությունների) համար սահմանվում է 20 տարի ամորտիզացիոն նվազագույն ժամկետ: Նախագծով առաջարկվում է այդ ժամկետը սահմանել 15 տարի: Հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական եւ ուսումնական հաստատությունների շենքերի եւ շինությունների համար գործող օրենքը սահմանում է 10 տարի ամորտիզացիոն նվազագույն ժամկետ: Նախագծով առաջարկվում է այդ ժամկետն իջեցնել մինչև 8 տարի: Իսկ հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի համար սահմանված 3 տարի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը նախագծով առաջարկվում է սահմանել 2 տարի:

Հաշվի առնելով հանրապետությունում գործարար եւ ներդրումային միջավայրի հետագա բարելավման անհրաժեշտությունը, ինչպես նաեւ առեւտրային կազմակերպությունների հիմնական միջոցների առավել բարձր տեմպերով արդիականացման պահանջը, առաջարկվող օրենքի նախագծով նախատեսվում է կրճատել ձեռնարկությունների հիմնական միջոցների ամորտիզացիայի ժամկետները՝ ձեւավորելով առավել արագ ամորտիզացիոն ժամկետներ: